Հավելված
ՀՀ կառավարության 2023 թվականի
սեպտեմբերի 14-ի N 1563 - Ն որոշման

«Հավելված N 1
ՀՀ կառավարության 2004 թվականի
մայիսի 13-ի N 692-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ԵՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԳԻՇԵՐԱՎԱՐՁԻ ՈՒ ՄՆՆԴԻ ՕՐԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՉԱՓԸ

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության առաջնությունների, Հայաստանի Հանրապետության տարածքում կազմակերպվող և անցկացվող տարբեր տարիքային խմբերի միջազգային մրցաշարերի (բացառությամբ Եվրոպայի և աշխարհի առաջնությունների) մասնակիցների գիշերավարձի օրական չափը՝ մեկ մասնակցի համար՝

1) մինչև 8000 դրամ՝ ծախսերը հաստատող փաստաթղթի առկայության դեպքում.

2) 5000 դրամ՝ առանց ծախսերը հաստատող փաստաթղթի:

2. Սահմանել Հայաստանի Հանրապետության առաջնությունների, Հայաստանի Հանրապետության տարածքում կազմակերպվող և անցկացվող տարբեր տարիքային խմբերի միջազգային մրցաշարերի (բացառությամբ Եվրոպայի և աշխարհի առաջնությունների) մեկ մասնակցի՝ մարզիկի սննդի օրական վճարի չափը՝

1) 5000 դրամ՝ մեծահասակների մրցաշարի մասնակցի համար.

2) 4100 դրամ՝ երիտասարդների մրցաշարի մասնակցի համար.

3) 3300 դրամ՝ պատանիների մրցաշարի մասնակցի համար.

4) 4100 դրամ՝ մեծահասակների, երիտասարդների և պատանիների մրցաշարի այլ մասնակցի համար (մարզիչ, մրցավար, բժիշկ):

3. Հայաստանի Հանրապետության տարածքում կազմակերպվող և անցկացվող տարբեր տարիքային խմբերի Եվրոպայի և աշխարհի առաջնություններին Հայաստանի Հանրապետության հավաքական թիմի անդամի մասնակցության

հետ կապված ծախսերը, այդ թվում՝ գիշերավարձը, սննդի օրական վճարի չափը, հաշվարկվում է համաձայն տվյալ միջոցառման միջազգային ֆեդերացիայի հրավերի՝ տվյալ բյուջետային տարում հատկացված ֆինանսական միջոցների շրջանակում։»։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

14.09.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ